



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«10» օգոստոսի 2023թ.

ՀՐԱՄԱՆ N 377-Ա

«ԿՈՆԴՈՐ ԷՅՐԼԱՅՆԶ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի հուլիսի 22-ի N 372-Ա հրամանը և «Կոնդոր Էյրլայնզ» ՍՊ ընկերության 2023 թվականի հուլիսի 27-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Կոնդոր Էյրլայնզ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Ֆրանկֆուրտ/EDDF/-Երևան/UDYZ/-Ֆրանկֆուրտ/EDDF/ երթուղով՝ 2023 թվականի հոկտեմբերի 29-ից մինչև 2024 թվականի մարտի 29-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ

Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի հուլիսի 22-ի N 372-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Ֆրանկֆուրտ/EDDF/-Երևան/UDYZ/- Ֆրանկֆուրտ/EDDF/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) 2023-2024 թվականների ձմեռային նավիգացիոն ժամանակահատվածում, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին և որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի հուլիսի 22-ի N 372-Ա հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնությունը:

3"Կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Կոմիտեի կայքում:

4.Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

 Recoverable Signature

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ